



## Ե Ր Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### «Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման մասին

#### Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	«Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա» հիմնադրամ
Կրճատ անվանումը	ԵԿՏԱ
Գործունեության հասցեն	Դ. Անհաղթի 10, Երևան, Հայաստան
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը	Չի ունեցել

#### ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց «Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա» հիմնադրամի (այսուհետ՝ ԵԿՏԱ կամ Ակադեմիա) կողմից ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի, զեկույցում նշված թերությունների վերացման ԵԿՏԱ-ի գործողությունների ծրագրի և այդ ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքի հիման վրա կազմված ԵԿՏԱ-ի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի եզրակացության նախագիծը:

#### Քննարկման արդյունքում ամրագրվեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	19 մայիսի 2017
բուհի ինքնավերլուծության ներկայացում՝	07 հուլիս 2017
փորձագիտական այցի իրականացում՝	02 հոկտեմբերի – 05 հոկտեմբերի 2017
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	14 դեկտեմբերի 2017
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	30 հունվարի 2018

## ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը<sup>1</sup>: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավաքարմագրման 10 չափանիշներով:**

### ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գնահատումն իրականացնելիս հաշվի է առնվել, որ ԵԿՏԱ-ն ՀՀ-ում տրանսազգային կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն է (ստեղծված ՀՀ, Ֆրանսիայի Հանրապետության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Իտալիայի կառավարությունների միջև համաձայնագրերի հիման վրա), որի առաքելությունն է “տարածաշրջանային ընդգրկում ունեցող, եվրոպական չափանիշների հետ համադրելի և միջազգային գիտակրթական զարգացումներին համահունչ, բազմապրոֆիլ բարձրագույն մասնագիտական կրթության տրամադրումը և գիտահետազոտական գործունեության իրականացումը”:

Մինչև 2011թ. գործող պետական հավատարմագրման չափանիշների և կարգի համաձայն Ակադեմիան հավատարմագրում չի անցել: Հավատարմագրման ներկա գործընթացին Ակադեմիան մասնակցել է իր դիմումին համաձայն:

ԵԿՏԱ-ն իրեն դիրքորոշում է՝ որպես միջպետական ՄՈՒՀ և իր առաքելությամբ նպատակադրված է իրականացնել տարածաշրջանային ընդգրկում ունեցող, եվրոպական չափանիշների հետ համադրելի և միջազգային գիտակրթական զարգացումներին համահունչ, բազմապրոֆիլ բարձրագույն մասնագիտական կրթության տրամադրում և գիտահետազոտական գործունեության իրականացում: Սակայն Ակադեմիայի կողմից իրականացվող գործունեությունը համահունչ չէ սահմանված առաքելությանը: Մասնավորապես՝ ՄՈՒՀ-ը նպատակադրված է իրականացնել եվրոպական չափանիշներին համապատասխան կրթություն, սակայն վերջիններիս արտացոլումը ՄԿԾ-ներում թույլ է, իսկ իրականացվող հետազոտությունը սահմանափակ է և չի արտացոլում եվրոպական կամ տարածաշրջանային վերջին զարգացումները: Թե՛ արտաքին, և թե՛ ներքին շահակիցներն, ընդհանուր առմամբ, կիսում են առաքելության մասնագիտական կրթության տարրը: «Եվրոպական» և «հետազոտություն» հասկացությունները շահակիցների համար ավելի աղոտ են: 2017-2020թթ. ՌԾ-ում ներկայացված նպատակները պարզորոշ կերպով կապված չեն առաքելությանը, ինչը չի ուղղորդում առաքելության ձեռքբերումը: Գործող առաքելությունն ու ռազմավարական նպատակները հիմնականում չեն արտացոլում ներքին և արտաքին շահակիցների կարծիքը: Իսկ առաքելության և նպատակների արդյունավետության գնահատման և բարելավման համընդհանուր մոտեցման և հստակ ու հուսալի մեխանիզմների բացակայությունը վտանգի տակ է դնում ՄՈՒՀ-ի գործունեության ձեռքբերումների և բացթողումների վերհանումը, գործընթացների թափանցիկությունը, ինչպես նաև հետագա ճիշտ և արդյունավետ պլանավորման գործընթացները:

ԵԿՏԱ-ն իրականացնում է 11 բակալավրական և 10 մագիստրոսական կրթական ծրագիր: Ակադեմիան կրթական գործունեություն է իրականացնում նաև 4 մարզային մասնաճյուղերում՝ Գյումրի, Վանաձոր, Գավառ և Իջևան քաղաքներում: ՄԿԾ-ները կազմված են առկա պետական կրթական չափորոշիչների հիման վրա: Ակադեմիան սկսել է ուսումնական գործընթացն իրականացնել վերջնարդյունքահեն մոտեցմամբ: ՄԿԾ-ներում նկարագրված վերջնարդյունքներն ընդհանուր առմամբ բխում են որակավորումների ազգային շրջանակի պահանջներից, սակայն վերջնարդյունքները, ըստ առանձին կոմպոնենտների, տարբերակման կարիք ունեն:

<sup>1</sup> Հավելված՝ Փորձագիտական խմբի կազմը և ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմը

Վերջնարդյունքները քարտեզագրված են՝ ըստ առարկաների: Վերջիններիս բովանդակային հաջորդականությունը պահված է: Կրեդիտների բաշխման քաղաքականությունը նկարագրված է, սակայն բաշխումը դեռևս վերջնարդյունքներով չի իրականացվում:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները ձևակերպված են ՄԿԾ-ներում՝ ըստ առանձին վերջնարդյունքների: Սակայն մեթոդները մեծամասամբ ընդհանուր են բոլոր վերջնարդյունքների համար. չկա մեթոդների տարբերակում՝ ըստ գիտելիքի և հմտության, և ավելի շատ միտված են գիտելիքի ձևավորմանը, քան հմտությունների և կարողությունների: ԵԿՏԱ-ն կարևոր է ուսանողակենտրոն ուսումնառության միջավայրի ստեղծումը: Չնայած այս պահին կիրառվող մեթոդներից գերակշռում են դասախոսակենտրոնները, սակայն նկատելի է ձգտում և միտում դեպի ուսանողակենտրոն մոտեցման. դասախոսական կազմը փորձում է հնարավորինս կիրառել ժամանակակից մեթոդներ:

Ինչ վերաբերում է գնահատման համակարգին, ՄՈՒՀ-ում գործում է բազմագործոնային համակարգ: Ակադեմիայում կիրառվող գնահատման մեթոդները հիմնականում միտված են գիտելիքի գնահատմանը, քան հմտություններն ու կարողությունները: Իսկ գնահատման մեթոդները, դասավանդման և ուսումնառության մեթոդներն ու վերջնարդյունքները փոխկապակցման կարիք ունեն: Առկա են թեզերի մշակման պահանջներ և գնահատման չափանիշներ՝ ըստ առանձին բաղադրիչների, սակայն թեզերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ չնայած պահանջների առկայությանը՝ ոչ բոլոր թեզերն են դրանց բավարարում. մասնավորապես՝ որոշ թեզերում առկա են հետազոտական և կիրառական բաղադրիչները, որոշ թեզերում՝ ոչ: Դրական է համարվում, որ մշակված է ակադեմիական ազնվությանն օժանդակող ընթացակարգ, իսկ կուրսային, ավարտական և մագիստրոսական թեզերն ստուգվում են համացանցային միջավայրում գործող plagiarism checking on-line ծրագրերով:

Ակադեմիայում իրականացվել է ՄԿԾ-ների համեմատական վերլուծություն այլ բուհերի նմանատիպ ՄԿԾ-ների հետ բովանդակային առումով համահունչությունը ապահովելու նպատակով, սակայն խրախուսվում է բենչմարքինգի արդյունքների ներդրումը ՄԿԾ-ներում:

Ակադեմիան, կարևորելով բարձր մասնագիտական որակներ ունեցող դասախոսների անհրաժեշտությունը, թափուր պաշտոնների համալրումն իրականացնում է մրցույթային կարգով և դասախոսներին հրավիրելու մեխանիզմով: Չնայած ԵԿՏԱ-ն չի իրականացնում ՊԴ կազմի հավաքագրման և ընտրության մեխանիզմների արդյունավետության գնահատում, այդուհանդերձ թե ուսանողները և թե վարչական անձնակազմը բավարարված է ՊԴ կազմից: Դասախոսական կազմի հավաքագրումն իրականացվում է առաջնորդվելով յուրաքանչյուր տարակարգին ներկայացվող պահանջներով, սակայն վերջիններս շատ ընդհանրական են և նկարագրված չեն ըստ առանձին ՄԿԾ-ների: Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ը որդեգրել է քաղաքականություն աշխատել հիմնականում համատեղությամբ (ժամավճարով) աշխատող դասախոսների հետ՝ պարզաբանելով, որ այս մեխանիզմով առավել շատ պրակտիկ ոլորտի մասնագետներ են ներգրավվում դասապրոցեսում: Այդուհանդերձ դասախոսները միայն պրակտիկ ոլորտի մասնագետներ չեն, այլ մասնագետներ են, ովքեր համատեղությամբ աշխատում են ԵԿՏԱ-ում և դասավանդում մի քանի այլ ուսունական հաստատություններում: Առավել մտահոգիչ է դասախոսական կազմի կայունության խնդիրը՝ մասնավորապես, այն հանգամանքը, որ գրեթե բոլոր դասախոսները աշխատում են ժամավճարային հիմունքներով, իսկ ակադեմիայում տարածված է մեկ դասախոսի կողմից մի քանի առարկաներ (մինչև 6-7) դասավանդելը, ինչը կարող է մի կողմից ազդել դասավանդման որակի վրա, մյուս կողմից վտանգել կրթական գործընթացի բնականոն ընթացքը: ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքի որակի և արդյունավետության վերլուծության և գնահատման որոշ մեխանիզմներ՝ ուսանողների շրջանում հարցումներ, դասալսումները և քննարկումներ: ԵԿՏԱ-ն կարևորում է մասնագիտական զարգացման անհրաժեշտությունը, սակայն այս ուղղությամբ հատկացվող թե ռեսուրսներն են սահմանափակ

(բյուջեի 1%), թե կատարված աշխատանքները: Մինչ օրս իրականացված լուրջ ձեռքբերումներ չկան, իսկ իրականացված վերապատրաստումները հիմնականում դասախոսական կազմի անհատական կապերի և սեփական նախաձեռնությամբ է իրականացվում: ՄՈՒՀ-ում գործում են դասախոսների և ուսումնասօժանդակ կազմի խրախուսման որոշ մեխանիզմներ (ակադեմիայի գիտական հանդեսում տպագրություն, դրամական պարգևներ), սակայն դրանք պետք է զարգացնել աշխատակիցների մասնագիտական առաջընթացին նպաստելու նպատակով:

Ներկայումս ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան ՄԿԾ-ների իրականացման համար բավարար է, ինչը հիմք է հանդիսանում ՄԿԾ-ների իրականացմանն ուղղված գործընթացների բարելավման և կայունության: Դրական է գնահատվում ԵԿՏԱ-ի ջանքերը՝ միտված ուսումնական գործընթացն անհրաժեշտ ռեսուրսային բազայով ապահովելուն: Ակադեմիան բաց է ռեսուրսների հատկացումների հարցում ու պատրաստական, ինչպես նաև ձգտում է բարելավել լսարանային և լաբորատոր պայմանները, արդիականացնել ակադեմիական ենթակառուցվածքները: Սակայն լսարանները, հիմնականում, հարմարեցված չեն ինտերակտիվ մեթոդներ կիրառելու և գործարար խաղեր կազմակերպելու համար, իսկ նյութատեխնիկական ռեսուրսներով հագեցած լսարանները սահմանափակ են: Ռեսուրսային բազայի հարստացումը հիմնականում կատարվում է կամ միջազգային ծրագրերի շրջանակներում կամ նվիրատվության միջոցով: ԵԿՏԱ-ի բյուջեն ձևավորվում է հիմնականում ուսանողների վարձավճարներից, որը կայունության համար խոցելի է: Ֆինանսական ռեսուրսների կառավարման և մուտքերի բազմազանեցման հստակ համակարգի ներդրման անհրաժեշտություն է նկատվում, որը ֆինանսական կայունության երաշխավորման հիմք կհանդիսանար: Ֆինանսական միջոցների բաշխումը պետք է իրականացնել ըստ ռազմավարական նպատակների:

ԵԿՏԱ-ում ուսանողների հավաքագրումը, ընտրությունն ու ընդունելությունն իրականացվում են համապատասխան կարգերի հիման վրա: Ներկայումս Ակադեմիայում սովորում են 1375 (այդ թվում՝ 1010-ը Երևանում, 365-ը՝ մասնաճյուղերում) ուսանող: Ուսանողներն Ակադեմիայից ստանում են համապատասխան աջակցություն: Ուսանողների արդյունավետ ուսումնառությունը խթանելու նպատակով ԵԿՏԱ-ն ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ: Այնուամենայնիվ, չնայած ՄՈՒՀ-ում գործում է շրջանավարտների և կարիերայի կենտրոն, ուսանողների օժանդակությանը միտված գործընթացներ գրեթե չեն իրականացվում: Կենտրոնը գրեթե ինտեգրված չէ ՄՈՒՀ-ի կրթական գործընթացներում, ուսանողների տեղեկատվածությունը կենտրոնի մասին ցածր է: Դեռևս չկա շրջանավարտների բազա և համակարգված կերպով չի իրականացվում շրջանավարտների զբաղվածության վերլուծություններ, իսկ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալներն ստացվում են ոչ ֆորմալ ճանապարհով և ոչ ամբողջական:

Գիտահետազոտական գործունեությունն Ակադեմիայի գործունեության կարևոր գերակայություններից է, սակայն դրա հիմնական ուղղությունները և սկզբունքները դեռևս հստակ սահմանված չեն: Թեպետ 2017-2020 Ռազմավարական զարգացման ծրագրում նշված են հետազոտության ոլորտում խնդիրները, վերջիններս իրենց ձևակերպմամբ ընդհանուր են և չեն արտացոլում կոնկրետ հետազոտական հետաքրքրությունները: Գիտահետազոտական գործունեության իրականացմանը, զարգացմանն ու կայունության ապահովմանն ուղղված ֆինանսական հատկացումներ, ըստ բյուջեի, չեն իրականացվում, շոշափելի քայլեր չեն կատարվում նաև գիտահետազոտական գործունեության խրախուսման նպատակով ֆինանսական ռեսուրսների հայթայթման տեսանկյունից: Դեռևս ներդրված չեն հետազոտությունների իրականացմանը և դրանց զարգացմանը միտված հստակ քաղաքականություն կամ ընթացակարգեր: ՄՈՒՀ-ում դեռևս արմատավորված չէ հետազոտությունները (և դրանց արդյունքները) որպես եկամուտների կայուն աղբյուր դիտարկելու հայեցակարգը, որը թույլ կտար առևտրայնացնել հետազոտական գործընթացն ու դրա վերջնարդյունքները, խթանել առավել կիրառական և արդիական (մասնավորապես,

միջազգային մակարդակով գիտահետազոտական գործունեության արդի միտումներին համահունչ) հետազոտությունները՝ համապատասխանաբար, զգալի ավանդ ունենալ ֆինանսական մուտքերի կայունության ապահովման առումով: Դեռևս չեն իրականացվում միջամբիոնային և միջառարկայական հետազոտություններ: Ուսանողների ներգրավվածությունը խիստ սահմանափակ է հետազոտական աշխատանքներում, իսկ դասախոսների կողմից իրականացվող հետազոտությունը հիմնականում իրականացվում է վերջիններիս նախաձեռնությամբ: Զգացվում է առավել ակտիվ և գործնական քայլերի ձեռնարկման անհրաժեշտություն՝ հետազոտական և ուսումնական գործընթացների միջև ներդաշնակ կապ և շարունակականություն ապահովելու առումով:

Իր առաքելությունից ոգեշնչված՝ ԵԿՏԱ-ն կարևորում է միջազգային հարաբերությունները ինչպես տեղական աշխատաշուկայի, այնպես էլ՝ միջազգային գործընկերների հետ: Այն արտաքին կապերի հաստատումն ու միջազգայնացումը դիտարկում է որպես իր ռազմավարական ուղղություններից մեկը, սակայն միջազգայնացման քաղաքականության ու ընթացակարգերի հստակ մշակման անհրաժեշտություն կա, ինչը կարող է նպաստել գործողությունների հստակեցմանը, ակտիվացնել համագործակցությունը և խթանել ուսանողների և դասախոսների շարժունությունը: Տեղական կազմակերպությունների հետ համագործակցությունն արդյունավետ է: Միջազգային համագործակցության խթանման նպատակով ֆինանսական ռեսուրսների բացակայությունը, միջազգային դրամաշնորհային ծրագրերին գրեթե չմասնակցելը խոչնդոտում են տեղական և միջազգային հաստատությունների ու կառույցների հետ արդյունավետ համագործակցության գործընթացին: Մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ը միջպետական ուսումնական հաստատություն լինելով հանդերձ, մինչ օրս դասախոսների և ուսանողների միջազգային փոխանակման դեպքերը խիստ սահմանափակ են, չկան նաև շարժունությունը խրախուսող հստակ մեխանիզմներ:

Կառավարման մարմինների, ստորաբաժանումների և առանձին պաշտոնների գործառույթները հստակեցնող փաստաթղթերի, ինչպես նաև ոլորտային կանոնակարգերի և ընթացակարգերի առկայությունն ապահովում է ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի կենսունակությունը և գործունեությունը: Չնայած որ կառավարման համակարգի և դրա առանձին օղակների գործունեության արդյունավետության գնահատման կանոնակարգված գործընթաց չի իրականացվում, ՄՈՒՀ-ը նաև չի գնահատում մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով ապահովվածությունն իր նպատակների իրականացման համար՝ վտանգելով ծախսումների նպատակայնությունը: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգն ապահովված է մարդկային ռեսուրսներով նվազագույն չափով՝ հիմնականում՝ ստորաբաժանումների գործառույթները փոխանցելով մեկ պատասխանատուի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև համատեղելով տարբեր պաշտոնների տեղակալումը: Նման մոտեցման վտանգն այն է, որ մարդկային ռեսուրսը կարող է չհամապատասխանել տարբեր պաշտոնների արդյունավետ վարման պահանջներին: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը ֆորմալ առումով լիարժեք հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել որոշումների ընդունման գործընթացին. սակայն ուսանողների փաստացի մասնակցությունը որոշումների կայացմանը բավական պասիվ է, ինչի պատճառները բացահայտելու և ակտիվությունը խթանելու նպատակով ՄՈՒՀ-ում որևէ մեխանիզմ չի կիրառվում: ՄՈՒՀ-ում ռազմավարական ծրագրերի իրականացման մեխանիզմների ու գործիքների դեռևս արմատավորված չլինելու և կարճաժամկետ պլանների և ռազմավարական ծրագրի միջև կապը հստակ չլինելու արդյունքում՝ ռազմավարական ծրագիրը ՄՈՒՀ-ի ամենօրյա գործողությունները պայմանավորող և ուղղորդող փաստաթուղթ չէ: ՄՈՒՀ-ում գործող ընթացակարգերի էական վերանայումներ չեն եղել, քանի որ դրանց մի մասը միայն վերջերս է մշակվել, իսկ մյուս մասի համար արդյունավետության գնահատման և վերանայման հստակ մեխանիզմներ չեն կիրառվել: ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը համակարգված չէ:

ՄՈՒՀ-ի ՈՆԱ համակարգը բավական երկտասարդ է, դեռևս բավականաչափ ինտեգրված չէ գործընթացներում և համակարգված չի իրականացվում: Չնայած սկզբունքներ և ուղենիշեր

պարունակող քաղաքականության, գոյություն ունեցող շատ գործընթացների առկայությանը, դեռ առկա չէ ՈՆԱ ստորակարգված համակարգ: Չնայած ՄՈՒՀ-ը մշակել է որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր, սակայն հստակեցված և ամբողջական չեն այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտային գնահատել հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավման և դրակի մշակույթի ձևավորման ընթացքը: Համակարգի արդյունավետ գործարկմանն ուղղված քայլերը դեռևս համակարգված բնույթ չեն կրում, թույլ է համագործակցությունը տարբեր ստորաբաժանումների միջև: Տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների և գործիքակազմի անկատարությունը և վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չեն տալիս գնահատել ՈԱ գործընթացների ազդեցությունը ՄԿԾ-ների և Ակադեմիայի գործունեության բարելավման վրա: Չնայած նկատվում է որոշակի գիտակցում ՊԻԳԲ շրջափուլի գործընթացների և ցիկլերի ուղղությամբ, առկա կառուցակարգերը և գործընթացները, մեծամասամբ առաձնացված չեն ըստ ցիկլերի և միախառնված են: Համակարգված հետադարձ կապի բացակայության պայմաններում՝ բացառությամբ ուսանողների կողմից դասախոսների գնահատման հարցումները, ինչպես նաև ներքին և արտաքին շահակիցների փոքր կառուցվածքային ներգրավվածությունը, ՈՆԱ համակարգն իրականում կենսական չէ և շրջափուլերը փակված չեն: ՈՆԱ կապված չէ ռազմավարական նպատակների և ցիկլերի հետ: Այն դեռևս չի սահմանազատել որակական և քանակական տվյալներ՝ իր իրականացումները չափելու և իր գործունեությունները բարելավելու համար:

Փորձագիտական խումբը, հաշվի առնելով հաստատության հավակնություններն ու նպատակները, տրամադրել է խորհրդատվություն վերհանված խնդիրների լուծման և բուհի գործունեության հետագա բարելավման ուղղությամբ:

#### **Հաստատության ուժեղ կողմերն են.**

- 1) Կրթական ծրագրերի՝ հիմնականում հաջողված կառուցվածքային ամբողջականություն և համապատասխանություն պետական չափորոշիչներին,
- 2) Ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված համալիր մոտեցումների գործարկում,
- 3) Կրթական ծրագրերի իրականացման համար ընդհանուր առմամբ բարենպաստ ուսումնական միջավայրի առկայություն և դրա շարունակական բարելավում՝ որպես զարգացման առաջնահերթություն,
- 4) Միջազգային կապեր հաստատելու հնարավորություններ, հատկապես՝ հիմնադիրների հաշվին,
- 5) Տեղական կազմակերպությունների հետ սերտ համագործակցության արժեքավոր փորձ,
- 6) Գրավչություն տարածաշրջանային օտարերկրյա ուսանողների համար և նրանց ներհոսք,
- 7) Ուսանողակենտրոն ուսուցմանն անցման ձգտում,
- 8) Մոտիվացված և նվիրյալ դասախոսական կազմ,
- 9) Խորհրդատվական և այլ ծառայությունների հասանելիություն ուսանողներին,
- 10) Որոշումների կայացման գործընթացում ներքին շահակիցների ներգրավվածություն:

#### **Հաստատության թույլ կողմերն են.**

- 1) Գործող առաքելության և փաստացի գործունեության միջև կապի խզում,
- 2) Գործողությունները և փոփոխությունները միասնականացնող և ուղղորդող տեսլականի բացակայություն,
- 3) Նպատակների իրականացման ցուցիչների բացակայություն և, որպես արդյունք, գործողությունների ոչ հստակ միտվածություն նպատակներին,
- 4) Արտաքին շահակիցների ոչ լիարժեք ներգրավվածություն ռազմավարական զարգացման և որակի ապահովման գործընթացներում,

- 5) Կառավարման համակարգի ոչ պատշաճ ապահովվածություն արտաքին միջավայրի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունով,
- 6) Թերացումներ մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացի առանձին փուլերում. պլանավորում, գնահատում, վերապատրաստումներ, առաջխաղացում,
- 7) Հետազոտական գործունեության նպատակների անորոշություն,
- 8) Ֆինանսական մուտքերի կենտրոնացվածություն՝ կախում հիմնականում մեկ աղբյուրից՝ ուսման վարձավճարներից,
- 9) Հատուկ կարիքներ ունեցողների համար նախատեսված հարմարությունների բացակայություն,
- 10) Որակի ապահովման ներքին համակարգի՝ ՄՈՒՀ-ի մյուս ենթահամակարգերին ինտեգրվածության պակաս:

**Բարձրագույն կրթության եվրոպական տարածքին (ԵԲԿՏ) ՄՈՒՀ-ի ինտեգրվելու** հավակնությունների տեսանկյունից միջազգային փորձագետը գնահատել է ՈԱԵՉՈՒ-ի առաջին հատվածի ներդրման աստիճանը, միևնույն ժամանակ անդրադարձ կատարելով նաև բուհի այլ ոլորտներին՝ համոզվելու, որ ԵՏԿԱ-ն կարող է համարվել, կամ դառնալ ԵԲԿՏ-ի լիիրավ անդամ: Սա հատկապես արդիական է Ակադեմիայի պարագայում, քանզի վերջինս թե՛ իր անվամբ, և թե՛ առաքելությամբ հարում է եվրոպականությանը:

Փորձագետի դիտարկումներում մանրամասն վերլուծված է իրավիճակն ուսումնական հաստատությունում ՈԱԵՉՈՒ տեսանկյունից, իսկ խորհրդատվություններն ուղղված են վերհանված խնդիրների լուծմանը:

Եզրակացությունն այնպիսին է, որ ուսումնական հաստատությունը գտնվում է «ամբողջական և անհրաժեշտ փոխակերպման փուլում»: Ռազմավարական անհրաժեշտություն կա՝ օգտագործելով առկա լավագույնը (առաքելություն, հիմնադրմանը մասնակցած համալսարաններ, լավ փոխհարաբերություններ աշխատաշուկայի հետ, ուսանողների և աշխատակազմի գնահատանք) և որակի մշակույթը՝ հիմնված առաքելության եվրոպականության տարրի վրա, թարմացնելու Ակադեմիան, նրա տրամադրած կրթությունը և կազմակերպական կառուցվածքը, ավելացնելու ուսանողների թվաքանակը, բարելավելու հետազոտությունը և ֆինանսական ռեսուրսները:

**ԵԿՏԱ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն Ակադեմիան ուղարկել է ՈԱԿ 24.11.2017թ.: Բուհն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն լեզով, որոնք տրամադրվել են տեղացի փորձագետներին: Բուհի ներկայացրած դիտողություններն ու մեկնաբանությունները թարգմանվել և ուղարկվել են միջազգային փորձագետին: 2017թ. դեկտեմբերի 7-ին ՈԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հանդիպմանը մասնակցել է նաև միջազգային փորձագետը օն-լայն: Հաշվի առնելով բուհի մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը որոշակի փոփոխություններ է կատարել զեկույցի վերջնական տարբերակի ձևակերպումներում: Վերջնական զեկույցի տեքստում խմբի կողմից կատարած փոփոխությունների վերաբերյալ նշումներ են կատարված զեկույցի համապատասխան էջերի տողատակերում:

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՈՒՀԻ ԾՐԱԳԻՐԸ**

**ԵԿՏԱ-ն ընդունում է, որ փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվությունները բուհի ռազմավարության շրջանակներում են, և ներկայացրել է**

**փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման Գործողությունների ծրագիր և ժամանակացույց:**

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով վերջնական զեկույցի խորհրդատվությունների հիման վրա ԵԿՏԱ-ի կազմած ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումների պլանը, **եզրակացնում է.**

Ակադեմիան, հաշվի առնելով փորձագիտական խմբի ներկայացրած դիտարկումները, բացահայտված հիմնախնդիրների լուծման նպատակով հանձնառել է բարեփոխել իր գործունեության բոլոր ոլորտները, մասնավորապես՝

1. Բոլոր ոլորտների /չափանիշների/ համար սահմանված ռազմավարությունների արդյունավետ իրականացման համար կազմվել է գործողությունների ծրագիր: 10 չափանիշներից յուրաքանչյուրի կապակցությամբ ծրագրում սահմանված է մեկական նպատակ, որից բխեցված են գործողություններ: Գործողությունների ծրագիրը մեծապես խարսխված է փորձագիտական զեկույցում նշված խորհրդատվությունների վրա: Այնուամենայնիվ, կան խորհրդատվություններ, որոնք ներառված են բարելավման պլանի “Կարիքի հետազոտում” բաժնում, և վերջիններիս իրականացման համար քայլեր սահմանված չեն: Դրանցից առավել կրիտիկականներն են՝

- ՄՈՒՀ-ում քաղաքականությունների մշակմանը հիմնադիրների առավել ակտիվ մասնակցության և եվրոպական արժեքների առավել մշտական ներկայության ապահովման նպատակով՝ կամ ակտիվացնել Հոգաբարձուների խորհրդի դերը, կամ ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի այլ օղակներում ներգրավել օտարերկրյա հիմնադիրների ներկայացուցիչներ (խորհրդատվություն 5),
- Որոշումների կայացման ընթացակարգերում նախատեսել ուսանողների ներկայացուցիչների կարծիքի կամ եզրակացության հաշվառման մեխանիզմ՝ որոշումների կայացմանն ուսանողների մասնակցությունը և հետաքրքրվածությունը խթանելու նպատակով (խորհրդատվություն 8),
- Ակտիվացնել արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում և համակարգել ներքին և արտաքին շահակիցներից ստացվող հետադարձ կապը՝ վերջիններիս ներգրավվելով որպես կառուցվածքային գործընկերներ: ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածությանը կարող է նպաստել նաև շրջանավարտների միության հիմնումը (խորհրդատվություն 60):

Ինչպես նաև մասնաճյուղերին վերաբերողները՝

- Ունիֆիկացնել ՄՈՒՀ-ի մասնաճյուղերում իրականացվող վարչարարության համակարգերը և ներդնել մասնաճյուղերի շահակիցներին տեղեկատվության լիարժեք փոխանցում ապահովող մեխանիզմներ՝ կրթական և այլ ծառայությունների մատուցման համաչափությունն ապահովելու նպատակով (խորհրդատվություն 12),
- Ակտիվացնել մասնաճյուղերում հետազոտական գործունեությունը՝ դասախոսներին և ուսանողներին ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության մեջ ներգրավելով, առանձին ուղղությունների համար խթանել տեղում իրականացվող հետազոտությունները (խորհրդատվություն 38),
- Խթանել մասնաճյուղերի՝ կրթության որակի ապահովման կարողությունների ձևավորումը հատկապես վերապատրաստումներով և ենթակառուցվածքների զարգացմամբ (խորհրդատվություն 62):

Բարձրագույն կրթության Եվրոպական տարածքին ինտեգրվելու տեսանկյունից միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները և խորհրդատվությունները նույնպես որոշակի առումով հաշվի են առնված բուհի կողմից:



2. Բարելավմանը միտված վերանայված գործողությունների ծրագիրը մասամբ է ներկայացված ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխան: Ծրագրում ներկայացված են բարելավման ենթակա գործողությունների ընթացիկ վիճակը, յուրաքանչյուր գործողության իրականացմանն ուղղված քայլերը, գործողությունների ակնկալվող վերջնարդյունքներն ու գնահատման ցուցիչները:  
Ծրագրի ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ Ակադեմիան ավելի շատ կարևորում է գործընթացների փաստաթղթային կանոնակարգումը՝ տարբեր քաղաքականությունների, ընթացակարգերի և մեխանիզմների մշակումը, քան գործընթացների պլանավորումը, իրականացումը և նպատակներին համապատասխան ազդեցության ուսումնասիրումը:  
Քայլերի մեծ մասի հաջորդականությունը տրամաբանական է և բխում է համապատասխան նպատակներից, սակայն քայլերը, զգալիորեն կրկնելով տրված խորհրդատվությունները, հստակ գործողություններ ցույց չեն տալիս, այսինքն՝ հստակ չէ, թե ՄՈՒՀ-ն ինչպես է լուծելու խնդիրները:
3. Գործողությունների ծրագրով սահմանված է բոլոր քայլերի համար հստակ պատասխանատու անձ, սակայն գրեթե ամբողջ ծրագրի իրականացման պատասխանատվությունը ՄՈՒՀ-ի բարձր օղակի ղեկավարներինն է: Որոշ դեպքերում նշված գործողությունները ոչ միշտ են գտնվում սահմանված պատասխանատուների անմիջական գործունեության տիրույթում: Օրինակ՝ գործողությունների ծրագրով նախատեսվում է, որ կարիերայի կենտրոնի տնօրենը պատասխանատու է դասախոսական կազմի մանկավարժական վերապատրաստման դասընթացների իրականացման համար:
4. Խնդիրների լուծման համար նախատեսված ռեսուրսներն առկա մարդկային ռեսուրսներն են, սակայն մի շարք գործողությունների իրականացման համար անհրաժեշտ են հավելյալ նյութական և ֆինանսական ռեսուրսներ, որոնք ծրագրով նախատեսված չեն: Բացակայում է տեղեկատվությունն այն մասին, թե ինչ ֆինանսական և նյութական ռեսուրսներ կպահանջվեն հաշվի առնված գործողությունների բարելավումների իրականացման համար, որոնք են դրանց ձևավորման հնարավոր աղբյուրները: Այս առումով ծրագիրը պարունակում է որոշակի ռիսկեր, քանի դեռ կայունացված չեն ֆինանսական հոսքերը:
5. Քայլերի մեծ մասի համար իրականացման ժամանակահատվածները հստակ սահմանված չեն. նշված է իրականացման ժամանակահատվածի միայն մեկնարկը՝ առանց վերջնաժամկետի, ինչը կարող է վտանգել գործողությունների իրականացումը: Ընդհանուր առմամբ ծրագրով նախատեսված են 2017-20թթ. մեկնարկող քայլեր: Նշված հանգամանքը որոշ չափով սահմանափակում է գործողությունների պլանի իրականացման իրատեսականությունը և հիմնավորվածությունը գնահատելու հնարավորությունները:
6. Առանձին քայլերի վերջնարդյունքները հիմնականում ձևակերպված են նպատակներին համապատասխան, թեև որոշ դեպքերում հիմնական շեշտադրումը փաստաթղթերի տեսքով արդյունքների ստացման վրա է:
7. Թեև գործողությունների ծրագրում ամրագրված են ցուցիչներ յուրաքանչյուր քայլի համար, դրանց զգալի մասը չափելի չէ, իսկ որոշ ցուցիչներ ամբողջությամբ կրկնում են վերջնարդյունքները կամ քայլերը: Ոչ միշտ են սահմանված վերջնարդյունքների ազդեցությունը գնահատող ցուցիչներ (բավարարվածության բարձրացում, ներգրավվածություն, կարողությունների տնօրինում), ինչը թույլ չի տալու բուհին գնահատել, թե տվյալ գործողության ավարտին որակական ինչպիսի փոփոխություններ կարող են լինել:

**Այսպիսով, փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման պլանի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ԵԿՏԱ-ն հիմնականում հաշվի է առել փորձագիտական խմբի խորհրդատվությունները, մափնանշած թերությունները և պարտասպանություն է**

հայտնում շտկել դրանք: Թերությունների վերացման ՄՈՒՀ-ի ներկայացրած ծրագրի հիմնական մասի իրականացումը ոչսկեր չի պարունակում՝ հաշվի առնելով, որ նշված գործողությունների իրականացման քայլերը հիմնականում ունեն փրամաբանական հաջորդականություն և ուղղված են նպատակների իրականացմանը, գործողությունների ծրագրով սահմանված են քայլերի իրականացման համար պատասխանատուներ, սակայն ծրագրով նախատեսված քայլերի մի մասը հստակ չէ, նյութական և ֆինանսական ռեսուրսներ ծրագրով չեն նախատեսվում, գործողությունների ավարտի ժամկետները բացակայում են, իսկ ցուցիչների զգալի մասը չափելի չէ: Բարելավման ծրագրում նշված քայլերի իրականացումը կարող է հիմքեր ստեղծել ՄՈՒՀ-ի նոր մոդելի մշակման և ներդրման համար: Այդ մոդելի հիմնական դրույթները նպատակաուղղված են նորմատիվային դաշտի բարելավմանը, վարչական, ուսումնական և գիտահետազոտական գործառնությունների արդյունավետության բարձրացմանը, իսկ սահմանված դրույթների արդյունավետ իրականացումը կարող է նպաստել առկա խնդիրների լուծմանը և ՄՈՒՀ-ի առաջընթացի ու կայուն զարգացման ապահովմանը:

Փորձաքննության արդյունքում փորձագիտական խումբը, կիրառելով «անբավարար» և «բավարար» գնահատման սանդղակը<sup>2</sup>, ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողություններն՝ ըստ հավատարմագրման չափանիշների գնահատել է.

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
I. Առաքելություն և նպատակներ	Անբավարար է
II. Կառավարում և վարչարարություն	Անբավարար է
III. Կրթական ծրագրեր	Բավարար է
IV. Ուսանողներ	Բավարար է
V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարար է
VI. Հետազոտություն և զարգացում	Անբավարար է
VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարար է
VIII. Հասարակական պատասխանատվություն	Բավարար է
IX. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարար է
X. Որակի ներքին ապահովման համակարգ	Անբավարար է

Ելնելով վերոգրյալից, ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին առաջարկում է իր որոշման մեջ ԵԿՏԱ-ի ուշադրությունը հրավիրել հետևյալ կետերի իրականացման վրա.

<sup>2</sup> Փորձագիտական խումբը գնահատելիս օգտվել է հետևյալ սկզբունքներից.

- **անբավարար է**, եթե չափանիշի պահանջներին չի համապատասխանում, նման ձևով շարունակելն անթույլատրելի է, և հրատապ բարելավումների անհրաժեշտություն կա,
- **բավարար է**, եթե համապատասխանում է չափանիշի պահանջներին, չնայած որ կարող է լինել բարելավման անհրաժեշտություն:

1) առաջնահերթ լուծում տալ Առաքելություն և նպատակներ, Կառավարում և վարչարարություն, Հետազոտություն և զարգացում, Որակի ներքին ապահովման համակարգ ոլորտներում առկա խնդիրներին,

2) «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12 կետով կամ Հավատարմագրման հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում պարբերաբար ՈԱԱԿ ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ,

3) վերանայել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը՝ հաշվի առնելով սույն եզրակացության մեջ նշված դիտողությունները ծրագրի վերաբերյալ:

ՈԱԱԿ-ը գտնում է, որ առաջարկվող բարեփոխումները կնպաստեն ինքնավերլուծության զեկույցում ներկայացված Ակադեմիայի հավակնությունների իրականացմանը և հիմք կհանդիսանան հաջորդող գնահատման համար:

ՈԱԱԿ փորձաքննության  
բաժնի ղեկավար

Փորձագ. խմբի ղեկավար

ՈԱԱԿ համակարգող

Հավելված

## Փորձագիտական խմբի կազմը.

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի ինքնավերլուծության և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից (տե՛ս կից հավելված 1՝ փորձագետների ինքնակենսագրականները)՝

1. **Աննա Հովակիմյան՝** Հայ-ռուսական համալսարանի Համակարգային ծրագրավորման ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տեխ.գիտ.թեկնածու, պրոֆեսոր,
2. **Տիգրան Մնացականյան՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարման ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու,
3. **Տիգրան Սարգսյան՝** Երևանի պետական համալսարանի Սերվիսի ամբիոնի դոցենտ, աշխ. գիտ. թեկնածու,
4. **Լուսինե Բոլաերթ՝** AEQES-ի անդամ, ֆլամանդական հավատագրման նոր համակարգի պիլոտային գնատարման (մետա-գնահատման) միջազգային ռեզոնանսային խմբի անդամ, հետբուհական կրթությունը՝ բարձրագույն կրթության որակի ապահովում:
5. **Կամսար Ղարախանյան՝** Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Ինֆորմատիկայի ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ, ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման պատասխանատու Անի Մկրտչյանը:

Թարգմանությունը կատարել է Հայաստանում Ֆրանսիական համալսարան հիմնադրամի օտար լեզուների ամբիոնի վարիչ Զարուհի Սողոմոնյանը:

Սղագրումը կատարել է Սրբուհի Միչիկյանը՝ ԵՊՀ Սոցիոլոգիա ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի: